

ՀԱՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐՆ ՈՒ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԱՐՏԵՐԸ ԱՇՈՒՂ ՋԻՎԱՆՈՒ ԵՐԳԵՐՈՒՄ*

«Աշուղը ժողովրդի ժամանակագիրն է ու արձագանքը»:
Գարեգին Լևոնյան¹

Մուտք

Ջիվանին ոչ միայն աշուղական բանաստեղծությանը բնորոշ գեղարվեստական այլաբանություններով է անդրադարձել հայ ժողովրդի քաղաքական ճակատագրին վերաբերող հարցերին, այլև գրել է 19-րդ դարի վերջին քառորդի և 20-րդ դարասկզբի հայ ազգային-ազատագրական պայքարի ու ինքնապաշտպանական մարտերի հերոսներին նվիրված մի շարք ուշագրավ գործեր:

Այս ստեղծագործությունների մեծ մասը, ցավոք, այնքան էլ հայտնի չէ ընթերցողին, մանավանդ որ դրանց շարքին են պատկանում նաև Ջիվանու մինչև վերջերս անտիպ մնացած գործերը, որոնք կառուցված են բանաստեղծական ձևի մեջ արտահայտված՝ պատմական որոշակի իրադարձությունների քաղաքական գնահատականների վրա: Ուստի Ջիվանու նշված ստեղծագործությունները մի կողմից կարևորվում են **գրական-հասարակական** առումով, իսկ մյուս կողմից, ինչ-որ տեղ նաև բանաստեղծական ձևի մեջ դրված **պատմական սկզբնաղբյուրի և վավերագրի արժեք** ունեն, քանի որ որոշակի տեղեկություններ են հաղորդում այս կամ այն իրադարձության և գործչի մասին:

Ջիվանին ինքը 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի բախտորոշ իրադարձությունների ականատեսն է եղել կամ էլ դրանց մասին անմիջաբար լսել է դեպքերի ականատեսներից: Ուրեմն հիշյալ գործերը ոչ միայն հայ ազատամարտի բանաստեղծական արտահայտությունն են, այլև նրա մի շարք էջերի գրառումները ժամանակակցի կողմից:

1. Հայրենիքի գաղափարի գեղարվեստական արտացոլումը

Ջիվանու ստեղծագործական կերպարը մինչ օրս բնութագրվել է գերազանցապես նրա տպագիր երգերի հիման վրա, ուստի վերջիններիս

*Հոդվածն ընդունվել է տպագրության 20.08.2013:
1 Գարեգին Լևոնյան, Երկեր, Եր., 1963, էջ 2:

հայրենասիրական մոտիվները քննարկվել են՝ նկատի ունենալով հանրահայտ «**Ես մի ծառ եմ ծիրանի**», «**Ազգ իմ, որքան նկուն մնաս**», «**Առանց վախի, առանց ասի**» և նման այլ երգերը: Մինչդեռ նրա ողջ ժառանգության մեջ պահպանված ու մեզ հասած մի շարք ստեղծագործությունների հայրենասիրական մոտիվներն ավելի հարուստ են, բազմազան ու ընդգրկուն: Ջիվանին անմիջականորեն արձագանքել է իր ժամանակի հայ հասարակությանը հուզող հարցերին և իբրև ժողովրդի հավատարիմ զավակ ու ճշմարիտ հայրենասեր՝ պատրաստ է եղել իր անձով ու քնարով ծառայել նրան:

Հայրենասիրական տրամադրությունները Ջիվանու ստեղծագործություններում հանդես են գալիս **խոհական, խրատական, սիրային, պանդրխտության, սոցիալական, պատմաքաղաքական** և այլ մոտիվների ու թեմաների հետ միահյուսված՝ իբրև մեկ միասնական համակարգ: Ուստի հաճախ դժվար է լինում նրա այս կամ այն ստեղծագործությունը բնութագրել ու քննարկել մեկ մոտիվի շրջանակներում:

Իր աշխարհայացքով ու գործունեությամբ Ջիվանին հավատարիմ մնաց բանաստեղծի կոչմանն ու ընտրած ուղուն՝ իբրև ճշմարիտ հայրենասեր, լայնախոհ ու անձնվեր հայ մարդ, որը հպարտ էր իր ազգային պատկանելությամբ: Դեռևս 1883 թ. նա գրում էր.

**Քաղցած, ծարավ հայ կմնամ ճշմարիտ,
Փռամուլ, ազգուրաց իշխան չեմ լինի,
Եթե ինձ խոստանան գայիսուն և գահ,
Չեմ ընդունիլ, ազգակործան չեմ լինի ²:**

Իսկ 1907թ. հորինած մի երգում՝ վերնագրված «Հայ ժողովրդին», Ջիվանին հպարտությամբ ու ակնածանքով էր խոսում մայր հայրենիքի հանդեպ իր տածած մեծ սիրո մասին: Այս երգը պատկանում է աշուղի լավագույն ստեղծագործությունների շարքին: Ահա այն ամբողջությամբ.

**Մայրս, իմ արմատս դու, հայ ժողովուրդ,
Քու արյունն եմ, քեզանից եմ գոյացել,
Քու հիմքդ բնական և խորախորհուրդ,
Արքդ ու պատիվդ վաղ եմ իմացել:**

**Այօրինի զավակ է այն անհատը,
Որ ազգին ու ցեղին ուզում է վատը,
Գեորգ Չավուշի պես քաջ հարազատը,
Ազգի պատվի համար մահ է ստացել:**

**Ո՛վ կարող է խլել Ջիվանու սրտից
Պատկերդ վշտահար, կերպդ թախծալից,
Ես քու ցավիդ միշտ եղել եմ ցավակից,
Երբեք, ողպացել եմ, քեզ չեմ մոռացել ³:**

² «Ջիվանու քնարը», կազմեց, տեքստը համեմատեց և ծանոթագրեց Ա. Մահակյանը, Եր., 1959, էջ 228:

³ Աշուղ **Ջիվանի**, Անհայտ երգեր, աշխատասիրությամբ Թովմաս Պողոսյանի, Եր., «Լուսակն»,

Հայրենիքի վշտահար ու թախծալի կերպարը, որը մշտապես ներկա է աշուղի ստեղծագործություններում, այս երգում միահյուսվել է Գևորգ Չավուշ անվան հիշատակությանը, քանզի մեծ հայդուկապետի նահատակությունը տեղի է ունեցել ճիշտ նույն տարում՝ 1907 թ. մայիսի 27-ին, Սուլուխ գյուղի մերձակայքում՝ թուրք զինվորների հետ ընդհարման ժամանակ:

Ջիվանու երգերում հայրենի եզերքի անմխիթար վիճակը ներկայացվում էր տարբեր տեսանկյուններից, և ըստ այդմ՝ աշուղի զգացմունքներն ու տվյալանքներն արտահայտվում էին տարբեր երանգավորմամբ: Ստեղծագործական կյանքի առաջին շրջանում Ջիվանին հայրենիքի հանդեպ անհուն սիրո զգացմունքները, նրա զավակների ծանր վիճակի պատճառած ցավն ու մորմոքը արտահայտել է մոր կերպարի միջոցով: «Մայր իմ» ստեղծագործության մեջ (1886 թ.) մայրը Մայր Հայաստանն է՝ անկոչ հյուրերի, «տնփեսաների», «այլակրոն պետերի և այլ նեղելոց» ձեռքից տառապած ու տառապող, ծննդավայրը օտարների թողած, որդիները գերված, մնացողների ծխերը մարած, լույսը խավարած մի դժբախտ կին: Սակայն աշուղը հորդորում է այդ դժբախտ կնոջը՝ չհուսահատվել և ապավինել Աստծուն:

Երբ 1904-ին հայ հասարակության որոշ շրջաններում նոր հույսեր էին արթնացել Հայկական հարցի բարեհաջող լուծման գործում Եվրոպայի ազատագրական առաքելության հանդեպ, Ջիվանին անդրադարձել է նրա ծագման ու այլակերպության ամեղծվածին և իրատես քաղաքագետի խորաթափանցությամբ նկատել.

**Տասըվեց համարը⁴ ձեռքիցս առան,
Նախանձները վաթխունումեկ դարձրին,
Նենք պիղատոսները ինձ բժիշկ դառան,
Հին ցավերուս վրա նորից ցավ դրին⁵:**

Նույն տարում՝ 1904 թվականին, իր «Անօգուտ շրջան, համդ, հոտդ անիծեն» սկզբնատողով ստեղծագործության մեջ նա այլաբանորեն անդրադարձել է նաև բանահյուսական երանգ ստացած «թղթե շերեփի» պատմությանը.

**Ջիվան, հարուստները կազմեցին սեղան,
Առաջ բերին կերակուրներ զանազան,
Բաղտավոր ազգերը կերան, կշտացան,
Հայը մինչև անգամ փշրանք չը տեսավ⁶:**

«Բաղտավոր ազգեր» ասելով՝ աշուղը նկատի ուներ բալկանյան ժողովուրդներին, որոնք Բեռլինի դաշնագրով հիմնականում ազատվեցին թուրքական լծից: Նա քանիցս հականե-անվանե հիշատակում էր այդ իրողությունը՝ «Ինչպես բուլղարներուն, սերբերուն արիք»⁷:

2009, էջ 432 (այսուհետ՝ ԱՋԱԵ):

4 Նկատի ունի Ման-Մտեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածը - Թ. Պ.:

5 ԱՋԱԵ, էջ 548:

6 Նույն տեղում, էջ 153:

7 Նույն տեղում, էջ 524:

Ջիվանու երգերում հայրենասիրական տրամադրությունները հաճախ դրսևորվել են պանդխտության, գաղթականության մոտիվների հետ միահյուսված: Քաջատեղյակ լինելով հայ ժողովրդի պատմությանը՝ աշուղը գիտակցում էր գաղթի, պանդխտության տխուր արդյունքները: «Հարց ու պատասխան» խորագիրը կրող երգում (1905 թ.) այն հարցին, թե՛

**Ինչ բան հայերին մեծ հարված է տվել,
Դարձրել է ավեր դրախտ երկիրը⁸,**

աշուղը հետևյալ պատասխանն էր տալիս.

**Գաղտականությունն է մեծ հարված տվել,
Դարձրել է ավեր դրախտ երկիրը⁹:**

Ջիվանին չափազանց ծանր վերապրեց 19-րդ դ. վերջին Արևմտյան Հայաստանում տեղի ունեցած զանգվածային կոտորածներն ու 20-րդ դարի սկզբներին Անդրկովկասում ստեղծված քաղաքական անսպաստ մթնոլորտը: Եղավ մի շրջան, երբ աշուղը կարծես թե վերջնականապես հուսահատվեց, և թվում էր, որ ամենակարող Աստվածն անգամ ի գորու չէր փոխելու հայերի ձակատագիրը: 1895 թ. նա գրեց մի երգ, որի ամբողջական բնագիրը, ցավոք, հնարավոր չէ վերականգնել: Նրա վերնագիրը «Տեր ողորմյա» էր, որը հետագայում աշուղը դարձրեց «Ազգիս տեր ողորմյան»՝ երգին տալով առավել ընդհանրացնող և համազգային բնույթ: Փրկության ուղի, ելք չգտնելով այս ստեղծագործության մեջ՝ բանաստեղծը Աստծուց ողորմություն էր հայցում իր խաչյալ որդու՝ հայ ժողովրդի համար.

**Տկարներուն տեր ու պաշտպան,
Աստված հզոր լեր պահապան,
Վերջի օրն է հայ ազգության,
Տեր ողորմյա, տեր ողորմյա¹⁰:**

2. Հայ ազատագրական պայքարի երգիչը

Ջիվանու երգերում տեղ գտած խոհերն ու մտորումները, փրկության ուղիների որոնումները հանգեցնում են սեփական ուժերին ապավինելու գաղափարին, որը 19-րդ դարի վերջին ու 20-րդ դարի սկզբին սկսում էր տիրապետող դառնալ հայ ազգային կուսակցությունների գործունեության մեջ: 1902 թ. Շուշիում գրած «Որսորդը քեզ հալածում է» սկզբնատողով երգում նա ասում է.

**Հույսդ դիր քու ուժիդ վրա,
Ասպարեզից հետ մի մնա,**

8 Նույն տեղում, էջ 299:

9 Նույն տեղում:

10 Նույն տեղում, էջ 556:

**Այժմ ողբի լսող չկա,
Մի անի լաց ու թաց, եղնիկ¹¹:**

Ուժի, քաջության, զինված պայքարի գովքը դառնում է հասկապետ 1900–ական թվականներին Ջիվանու հորինած երգերի հիմնական մտիվը: Աշուղը փաստում էր, որ հայ մարդը ևս ի գորու է պայքարել իր իրավունքների համար:

**Շատ շատերուց քաջ ենք, վեր ենք,
Մերթ կովենք, մերթ կհամբերենք,
Մենք մեր ուժով ձեռք կբերենք
Մեզ համար օթևան, քեռի¹²:**

Ջիվանու ստեղծագործություններում սեփական ուժին ապավինելու գաղափարը իմաստավորվում էր զենքի ու քաջության փառաբանման միջոցով: Աշուղը կոչ էր անում ուժին ուժով դիմագրավել, չարին զենքով պատժել, հորդորում էր զինվել ու սեփական ուժերով լուծել ազգային խնդիրները և կարևորը՝ պաշտպանվել թշնամու հարվածներից: Ջիվանին զինված ինքնապաշտպանությունից բացի այլ ուղի չէր տեսնում: Հարևանը վայրենի է ու բիրտ, կեղծավոր, ուխտադրուժ ու անկիրթ:

**Տեսնում ես՝ դրացիդ բարեբարո չէ,
Պիտի ուժդ ցույց տաս, որ երկյուղ կրե¹³:**

Ուշագրավ մի երգ ունի աշուղը «Քաջի մասին»¹⁴ խոսուն վերնագրով՝ «Խեղք էլ ունիս, ուժ էլ ունիս, տղամարդ» սկզբնատողով (1904 թ.): Երգի վերջին երկտողով Ջիվանին արտահայտում է իր դավանանքը, որը հար և նման է Եղիշեի՝ մահ իմացյալի մասին հայտնի խոսքերին:

**Զգտիր՝ քու մահովդ կենդանություն տաս,
Աշխատիր, որ իզուր տեղը չմեռնիս¹⁵:**

Պատահական չենք համարում Ջիվանու հետաքրքրությունը վիպական քաջ անվանյալ հերոսների հանդեպ: Քաջությամբ, նպատակին հասնելու գաղափարը Ջիվանու երգերում դառնում է համոզմունք, որը զենքի հետ համատեղ խարսխվում է դրա կարևորության գիտակցման վրա: «Տխուր փաստեր»¹⁶ երգի լեյտմոտիվը, հիմնական գաղափարի կրողը հետևյալ կրկնակ-երկտողն է.

**Տասը հազար գիրք կարժե մեկ պիպոտի¹⁷ հրացանը.
Աշխարհը մենք իմացանք, հանդերձյալին մնաց բանը¹⁸:**

11 Նույն տեղում, էջ 505:

12 Նույն տեղում, էջ 430:

13 Նույն տեղում, էջ 290:

14 Նույն տեղում, էջ 317:

15 Նույն տեղում, էջ 317:

16 Ջիվանու քնարը, էջ 344–345:

17 Պիպոտի – ամերիկացի զինագործ, որի ստեղծած հրացանն իր անունով է կոչվել:

18 Նույն տեղում:

Հայտնի է, որ ցարական Ռուսաստանում 1887 թ. գործադրված պարտադիր զինվորական ծառայության և զինակոչության մասին օրենքը ժողովրդական միջավայրում որոշակի դժգոհություն էր հարուցել: Ստեղծված բացասական վերաբերմունքն արտահայտվել էր նաև «սալդաթի խաղեր» անվամբ հայտնի ժողովրդական երգերում, և դրանք կենցաղավարում էին մինչև 20-րդ դարի վերջերը¹⁹: Ի հակադրություն այս մտայնության՝ Զիվանին զինվորական պարտադիր ծառայությունը գնահատում էր իր անխախտ դավանանքի դիրքերից: Ազգին, հայրենիքին զինվոր էր պետք, և այդ գիտակցությամբ էլ Զիվանին արժևորում էր տվյալ երևույթը: Այդ առումով ուշագրավ են նրա «**Զինվորի երգը**»²⁰ և «**Մրախույս նոր զինվորներին**»²¹ ստեղծագործությունները: Այս երգերի գրության թվականները հայտնի չեն, սակայն դատելով նրանց ոգուց՝ կարելի է եզրակացնել, որ դրանք ծնունդ են առել 1880–1890–ական թթ.: Ռուսաստանում զինակոչի օրենքի կիրառման սկզբնական շրջանում²²: «Զինվորի երգում» զինծառայության մեկնող հայ երիտասարդը հրաժեշտ է տալիս հարազատներին, խոստանում է լավ ծառայել «թագավորության», բարձր պահել հայի պատիվը, թշնամու առաջ վիզ չծնել և պատվիրում է.

**Զիվանի, պարծանք է հային՝
Ծառայել սուրբ հայրենիքին,
Հաշտ աչքով նայեցեք գործին,
Վարժըվելով սովորության²³:**

«Վարժըվել սովորության» նշանակում էր հաշտվել պարտադիր զինվորական ծառայության անհրաժեշտության հետ: Եվ այս խնդրում հայ մարդու համար կարևորը զենք գործածել սովորելն էր: «Մրախույս հայ զինվորներուն» երգում Զիվանին ցավով նշում էր, որ հայ մարդը զենք չի կրում, այն գործածել չգիտի.

**Ամբողջ վեց հարյուր տարի է թմրած ոչխարի նման,
Ամեն խուժդուժ մեզ տանելով լցնում է սպանդարան,
Տեսել եմ հայ գյուղացիներ հարյուրավոր սայլապան,
Ոչ մեկի մոտ չէ գտնվել մի սուր, կամ մի հրացան,
Ուրեմն տանք մեր որդիքը թող գնան լավ հմտանան,
Սովորեն զենք գործածելը, բարձրանա հայ ազգը վեր²⁴:**

Մեծ աշուղի երգերի մի ստվար խումբ էլ վերաբերում է 19–րդ դարի վերջին և 20–րդի սկզբին ծավալված ազատագրական պայքարի մասնակից ֆիդայիներին: Զիվանու երգերի անհատ հերոսները ոչ միայն սեփական ուժերով ազգային խնդիրը լուծելու գաղափարի կրողներն են, այլև այն գործադրողները: Զիվանու երգարվեստում նրանց հայտնվելը

19 Տե՛ս **Ղազիյան Ա.**, Հայ ժողովրդական ռազմի և զինվորի երգեր, Եր., 1989, էջ 176 – 228:

20 ԱԶԱԵ, էջ 218:

21 Նույն տեղում, էջ 440 – 441:

22 Օրենքը սկսել է գործադրվել 1887 թվականից – Թ. Պ.:

23 ԱԶԱԵ, էջ 218:

24 Նույն տեղում, էջ 440:

պատահական չէր:

Հայ ֆիդայիներին նվիրված այս ստեղծագործություններն իբրև պատմական երգեր հորինված են իրական հերոսների, անհատների մասին, որոնք հիմնականում լինելով ՀՅ Դաշնակցության անդամներ՝ ապրել ու մարտնչել են հանուն որոշակի գաղափարի՝ հայրենիքի ազատագրության ու հարազատ ժողովրդի պաշտպանության: Մրանք մեր երգարվեստի պատմությունից հայտնի **գովքի երգերի** ավանդներով հորինված ստեղծագործություններ են՝ գովքեր իրենց ժամանակակիցներին: Ջիվանու գովքի, փառաբանության ու մեծարման ելակետը ոչ թե և ոչ միայն հերոսների անհատական յուրահատկություններն ու արտաքին բարեմասնություններն են, այլ գերազանցապես նրանց անձնվեր հայրենասիրությունը, քաջությունն ու հավատարմությունը գաղափարին ու ընտրած ուղուն:

Հերոս, հայրենասեր անհատներին նվիրված երգերի շարքում ժամանակագրական առումով առաջնությունը պատկանում է Ալեքսանդր (Վարդան)²⁵ Գոլոշյանի մասին գրված ստեղծագործությանը, որի սկզբնատողն իսկ բնութագրական է. «**Հայրենիքի փրկության դու առաջին նահատակ**»: Հիրավի, Ա.Գոլոշյանը 1880-ականներին լայնորեն ծավալված ազատագրական պայքարի առաջին գործիչներից էր, առաջին արևելահայը, ով իր մատաղ կյանքը զոհաբերեց արևմտահայերի ազատագրության գործին: Երգի ստեղծման թվականը չի նշվում, ենթադրվում է, որ այն գրվել է Ա.Գոլոշյանի սպանության լուրի ազդեցության ներքո: Ջիվանին հուզական շեշտադրությամբ ներկայացնում է հերոսի կարճատև կյանքի հիմնական փուլերն ու դրվագները.

**Ուսումը նոր ավարտած, դու քսանհինգ տարեկան,
Գրիչը վայր գցելով՝ ձեռդ առար հրացան,
Մտար ութ ընկերով ասպարեզը փորձության²⁶:**

Այնուհետև աշուղը պարզում է հերոսի գործունեության նպատակը.

**Ութը մարդով կամեցար մի ահագին բան անել,
Արյունառուշտ քրդերը հայրենիքից դուրս վանել,
Ուզում էիր այսպիսով հայերուն ոտքի հանել,
Վախկոտներու սրտերում քաջության սերմը ցանել²⁷:**

Ջիվանին Գոլոշյանին անվանում էր երկրորդ Վահան Մամիկոնյան, նրա հոգին դատում սրբոց Վարդանանց շարքը: Այն փաստը, որ Ա.Գոլոշյանը երգում բնութագրվում է իբրև հայրենիքի փրկության ու ազատության համար զոհված առաջին նահատակ, ցույց է տալիս, որ աշուղը քաջածանոթ է եղել հերոսի կենսագրությանը: Ջիվանին չէր կարող անհաղորդ ու անտեղյակ լինել 1880-ականների վերջերին արևելահայոց հասարակական կյանքում լայն արձագանք գտած Ա.Գոլոշյանի նահա-

25 Ա. Գոլոշյանը (1867-1889) իր համար մականուն էր ընտրել Բաֆֆու «Խենթի» նշանավոր հերոսի անունը, նկատի ունենալով նրա հետապնդած սևեռուն գաղափարը - Թ.Պ.:
26 ԱՁԱԵ, էջ 387:
27 Նույն տեղում, էջ 387:

ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ

Ե (ԺԵ) քարի, թիվ 3 (43) հուլիս-սեպտեմբեր, 2013

ՎԷՄ համահայկական հանդես

տակության փաստին: Ալեքսանդր Գոլոշյանը՝ Թիֆլիսի ունևոր ընտանիքի զավակ, Լազարյան ճեմարանի ուսանող, թողնում է ուսումը և «Խենթի», «Կայծերի» հերոսների նմանությամբ նվիրվում արևմտահայ եղբայրների ազատագրության գործին: Նախ՝ նա սկսում է ժողովրդին կրթելուց, լուսավորելուց. ուսուցչություն է անում Արևմտյան Հայաստանին սահմանակից Ատրպատականի գյուղերում: 1887 թ. Գոլոշյանը վերադառնում է Թիֆլիս, մոտ մեկ տարի մնում է հայրենի քաղաքում, աշխատում համախոհներ հավաքել իր շուրջը, մոտիկից շփվում է գաղափարակիցների հետ, ապա նորից մեկնում Պարսկաստան: 1889 թ. մայիսի 15-ին իր ընկերների՝ Կարապետ Գուլագուզյանի և Հովհաննես Ազրիպայանի հետ փորձում է անցնել թուրք-պարսկական սահմանը՝ Տարնում գործող Հակոբ Մարկավազի խմբին միանալու նպատակով: Չուխ Գյադուկ լեռնանցքում նրանք ընդհարվում են թուրք զինվորների հետ, Գոլոշյանն ու Ազրիպայանը զոհվում են, Գուլագուզյանին հաջողվում է ազատվել²⁸:

Դեպքը հայտնի է դառնում հայ հասարակության լայն շրջաններին, վշտի, ամիստասնքի տրամադրություններ է հարուցում: Զիվանին իր երգում դառնությամբ է մատնանշում, որ Վարդանին ու նրա ընկերներին ավազակ են անվանում:

**Մեռար պատերազմի մեջ՝ իբր անգույթ ավազակ,
Բայց ո՛չ, գիտցողը գիտե՛ ունեիր այլ նպատակ²⁹:**

Հիրավի, ուժերն անհավասար էին, Գոլոշյանը փորձում էր մի լուցկով անտառի մեջ կրակ գցել, ասում է աշուղը, մեկ ձիպոտի ուժով գերանին հարվածել, բայց հավատացած է. «Քո թափածդ արյունով քաջեր ծնին շատ, բազում», և եթե.

**Քեզ նման հարյուր հազար ունենայիր երանի՛
Կարելի է գլուխ գար քո գործը այն ժամանակ³⁰:**

Սակայն Զիվանու սիրելի գլխավոր հերոսը Անդրանիկն էր, որն իր անձնական հատկություններով համապատասխանում էր աշուղի երևակայությամբ ստեղծվածին: Անդրանիկին նվիրված «Ուղերձ»-ն³¹ իր բնույթով կարելի է դասել ավանդական գովքի երգերի շարքը, առաջին տողն իսկ այդ է վկայում. «Ազգի հարազատ զավակ, անգուգական Անդրանիկ»:

Երգի հորինման ժամանակը 1904 թվականն էր՝ Սասունի ապստամբության տարին, երբ նրա հերոսը մի խումբ անձնազոհ քաջերի գլուխն անցած՝ անհավասար կռիվներ էր մղում թուրքական բռնապետության դեմ Սասունում, Մշո դաշտում: Չնայած ռուսական իշխանության հարուցած արգելքներին՝ կռիվների արձագանքները հասնում էին Թիֆլիս ու Բաքու, Երևան ու Ալեքսանդրապոլ, Շուշի ու Կարս, ոգևորում ժողովրդական երգիչներին և բանաստեղծներին: Նույն՝ 1904թ. աշուղ Շերամը նույն-

28 Տե՛ս ՀՀԸ, հ.1, եր., 1990, էջ 682:

29 ԱԶԱԵ, էջ 387:

30 Նույն տեղում:

31 Տե՛ս ԱԶԱԵ, էջ 107:

պես Անդրանիկին նվիրված երգ է հորինել³², որը լայնորեն տարածված էր և մեր օրերում էլ երգվում է իբրև բանահյուսական ստեղծագործություն³³: Եվ կարծես թե երկու արվեստակից աշուղները մրցում էին ժողովրդական հերոսին արժանավայել գնահատականներով փառաբանելու, մեծարելու ասպարեզում: Նրանց ստեղծագործությունները համեմատելիս դժվար է որևէ մեկին գերապատվություն տալ: Ջիվանին Անդրանիկին ևս նոր Վահան է անվանում՝ անմահ Մերոբ փաշայի հոգու և ոգու կրողը, հորդորում է նրան առաջ ընթանալ, մահից չվախենալ, քառօրի «**նման անդրանիկներ հայերու մեջ շատ կան**»: Ժողովրդական հերոսին Ջիվանին գովերգում է վեսն մակդիրներով, արժանի համարում դափնե պսակի ու հերոսի համբավի, որ իրավամբ վայելում է: Աշուղը կարևորում է մի հանգամանք. պատվի ու հարգանքի, մեծարելու ու գովաբանելու հիմքը հայրենիքին մատուցված ծառայությունն է, անձնագոհ գործը: Ըստ Ջիվանու՝ Անդրանիկի ծառայության նշանակությունը սերմնացան լինելն է, ուղի բացելը, հարթելը.

**Հայրենիքի սրտի մեջ բացիր ահագին ակոս,
Անպարտելի երկրագործ, մեծ սերմնացան, Անդրանիկ³⁴:**

Անդրանիկին նվիրված երգում, իբրև «Հայի պարծանք», ներկայացվում են նաև Սասնո աննկուն, անվեհեր քաջերը, որոնց ընկերն ու զորավարն է նա: Ջիվանին հավատացած է, որ հերոսի ծառայությունը նրա հետնորդները կգնահատեն ըստ արժանվույն և կարծես մարգարեանում է.

**Երփ կունենան հայերը ինքնուրույն կյանք, նոր ծնունդ,
Շիրմիդ վրա կը կանգնեն կոթող-արձան, Անդրանիկ³⁵:**

Թուրքական բռնակալության դեմ անձնուրաց պայքարի ելած հերոսներից էր կողբեցի Սարգիս Հակոբյանը, որի գործի ու ողբերգական վախճանի մասին է Ջիվանու «**Կողբ գյուղացի դու քաջ Սարգիս Հակոբյան**»³⁶ սկզբնատողով երգը: Երգի հորինման թվականը հայտնի չէ: Դատելով հիշատակված դեպքերից՝ կարելի է ասել, որ այն ստեղծվել է 1900 – 1901 թթ.:

**Հազար իննը հարյուր թվին եղավ ջանք,
Դեպի երկիր սկսել նոր արշավանք,
Խան Պետրոսն³⁷ էր խմբին տվող հրահանգ:
Դուն էլ նույնպես գործ դրիր մեծ աշխատանք,
Անցաք սահման, կատարեցիք զպոսանք,
Խաստուր գյուղը արեցիք ձեզ իջևան³⁸:**

Երգի հերոսը՝ Սարգիս Հակոբյանը, քիչ հայտնի անուն է, սակայն իր

32 Տե՛ս Շերամ, Երգեր, Եր., 1961, էջ 160:

33 Տե՛ս Ղազիյան Ա., նշվ. աշխ., էջ 173:

34 ԱԶԱԵ, էջ 107:

35 Նույն տեղում:

36 Նույն տեղում, էջ 357:

37 Խանասարի արշավանքի մասնակից, եղել է հիսնապետ:

38 Նույն տեղում, էջ 357:

սխրանքով արժանացել է հայրենասեր աշուղի ստեղծագործական ներշնչանքին: Ջիվանին այնուհետև ներկայացնում է հերոսի գործունեությանը վերաբերող տեղեկություններ, որոնց հավաստիությունը ստուգման կարիք ունի.

**Եկար Կավգաս ինըսուն ու երկուսին,
Ջինվոր գրվար Բլեճյանի մեծ խմբին,
Խաղաղ կյանքը չը սիրեց քու մեծ հոգին,
Վեհ սուրբ գործին [ի]անձնվեցար գլխովին,
Կատարելու պարտք ունեիր ազգային,
Քեզ կանչում էր Հայրենիքը սրբազան³⁹:**

Այնուհետև անսավով արևմտահայ եղբայրներին փրկելու կանչին՝ 1900 թ. Սարգիսը զինվորագրվում է Խան Պետրոսի խմբին, որը նոր արշավանք է ձեռնարկում դեպի Արևմտյան Հայաստան: Երգը պահպանվել է անավարտ վիճակով: Նրա հերոսը մեծարվում է Վարդանանց ճուտ, Վարդանիկ, «անվեհեր քաջ, պատիվ բերող հայության» արտահայտություններով:

Ջիվանու մի շարք երգերում ներկայացվում է թուրքական բանտը, որը մի կատարյալ դժոխք, տանջարան է եղել հայ մարդու համար: «Թուրքիայում բանտարկված մի հայ երիտասարդի ուղերձը յուր նշանածին»⁴⁰ (1897 թ.) վերնագրով և «Թուրքական բանտերում երկար ժամանակ»⁴¹ սկզբնատողով երգերը վերաբերում են այդ թեմային:

Ռուս-թուրքական սահմանն անցած հայ հայդուկները հաճախ հայտնրվում էին թուրքական բանտերում, և նրանց փրկվելը բացառիկ երևույթ էր: Այնքան արտառոց և ուրախառիթ է եղել հայդուկ Խաչատուր Տեր-Կարապետյանի՝ Ուսուլ Խեչոյի⁴² թուրքական բանտից ողջ-առողջ ազատվելը, որ Ջիվանին այդ իրողության կապակցությամբ երգ է հորինել: Հերոսը՝ Ուսուլ Խեչոն⁴³, իր ժամանակի համբավված հայդուկներից էր: Երգում միայն հիշատակվում են թռուցիկ տեղեկություններ՝ նրա ծագումը, որ այնպիսացի է, «լավ ծնողաց որդի», Տեր-Կարապետյան գերդաստանի «անթիքա սերունդ» և հայդուկապետ Խանի ընկերը: Ջիվանին Ուսուլ Խեչոյին նույնպես մեծարում է իբրև գործի, գաղափարի «թունդ սիրահար, նման անմահ Վարդանին»: Թուրքական բանտից Տեր-Կարապետյանի ազատվելը Ջիվանին հրաշք է համարում, Աստծո կողմից տնօրինված.

**Ով էր տեսել այսպես հրաշք, այսպես բան,
Հանկարծակի դևերն հրեշտակ դառնան,
Ազատ պրծար անգուր ղժոխքում դաժան,
Հոգի առար դու վերստին, Խաչատուր⁴⁴:**

39 Նույն տեղում:

40 Նույն տեղում, էջ 558:

41 Նույն տեղում, էջ 276:

42 Ջավախքի ամենահայտնի ֆիդային:

43 Ուսուլ՝ նշանակում է զգույշ- Թ. Պ.:

44 Նույն տեղում, էջ 276:

3. 1905–1906 թթ. հայ-թաթարական կռիվներին սվիրված երգեր

ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ

Ջիվանին դարձավ նաև Անդրկովկասում 1905–1906 թթ. տեղի ունեցած հայ-թաթարական զինված ընդհարումների ականատեսը և խոր ցավով արձագանքեց արևելահայությանը բաժին հասած ծանր ու արյունալի փորձությանը: Նրա երգերի մի ամբողջ շարք գրվել է հենց այդ տարիներին: Դրանցում դիտվում է որոշակի փոփոխություն՝ երևույթի դատապարտումից սկսած մինչև ինքնապաշտպանության կոչերը, առանձին կռիվների պատմությունը ներկայացնելուց մինչև այդ կռիվներում աչքի ընկած քաջերի գովքը:

Ջիվանու սրատես ու խորաթափանց աչքից չէր վրիպել այն կարևոր հանգամանքը, որ հայ-թաթարական ընդհարումները հրահրվում ու խրախուսվում էին ցարական իշխանությունների կողմից: «Այժմություն» երգը հետևյալ ուշագրավ միտքն է պարունակում.

**Չար սատանան մի խնձոր է գլորել,
Անմեղներու պարզ սրտերը պղտորել,
Ճանչերն սկսել են իրար կոտորել,
Փեթակի մեջ մտել է իշամեղու⁴⁵:**

Ջիվանին թափանցիկ ակնարկ էր անում իշամեղվի հասցեին՝

**Գայլ ու ցին⁴⁶, այս բանը քեզ է պատկանում,
Դրացին յուր դրացուն է սպանում,
Երկու եղպարց մեջը որոմ ես ցանում,
Պապանծվիս ու լավիս, անսիրտ չար լեզու⁴⁷:**

Ջիվանին արձագանքել է նաև 1905 թ. մայիսին Նախիջևանում տեղի ունեցած հայերի ջարդերին, ծաղկուն ու շեն բնակավայրերի թալանին ու ավերին: Հայտնի է, որ Նախիջևանի ջարդերն աչքի են ընկել առանձնահատուկ դաժանությամբ ու արյունահեղությամբ: «Դասիթան»⁴⁸ (1906 թ.) վերնագրով երգը՝ «Հայ թուրքական ընդհարման ժամանակ» սկզբնատողով, պատմում է Նախիջևանի հայության մղած ինքնապաշտպանական կռիվների մասին: Երգի մի տարբերակը ավարտուն տեսք ունի (երկրորդն անավարտ է, ձեռագրում պահպանվել է միայն մի հավելյալ տող), և հիմնական իրադարձությունը, որի մանրամասների մասին է պատմում Ջիվանին, Ջնաբերդ գյուղի մոտակայքում տասնմեկ հայ քաջերի և հինգ հարյուր թուրք հրոսակների միջև տեղի ունեցած մարտն է, որն ավարտվել է հայ հերոսների հաղթանակով: Ջնաբերդը մնացել է անառիկ ու անպարտելի: Ջիվանին նախ ներկայացնում է Նախիջևանի հայությանը հասած աղետը.

Ե (ԺԵ) քարի, թիվ 3 (43) հայիս-մեպրեմբեր, 2013

ՎԷՄ համահայկական հանդես

45 Նույն տեղում, էջ 349:

46 **Գայլ ու ցին** Գուլիցին - 1897-1904 թթ. Կովկասի գեներալ-նահանգապետ (ընդգծումն մերն է-Թ. Պ.)

47 ԱՋԱԵ, էջ 349:

48 Նույն տեղում, էջ 370:

**Անպաշտպան, առանց զենքի գյուղերը հայոց,
Դարձել էին մեկ-մեկ նոր սպանդանոց,
Քիչ էր թիվը դաշնակցական տղայոց,
Ամեն մի տեղ հասնում էին սրարշավ⁴⁹:**

Եվ ընդհանուր այս ֆոնի վրա Զնաբերդի հաղթական մարտը՝

**Զնաբերդը միայն մնաց անատիկ,
Խելագար թշնամուն ջարդ տվեց սաստիկ,
Անվախ կտրիճներով վեհ քաջամարտիկ,
Պահեց իր պատիվը, պարզերես եղավ⁵⁰:**

Այս երգում Զիվանին, յուրաքանչյուրին արժանի մակդիրներով, թվարկում է տասնմեկ հերոսների և նրանց ղեկավարի անունները. «Մելիքն անվախ, Գեղեցիկ Հովսեփը, Մարտիրոսը, Կյուրեղը, Ասատուրը, Լորդը, մեկ-մեկ Գայլ Վահան», «Ժիր Արամայիսը Վահագնի նման», քաջ Նիկոլը, գանձակեցի Գրիգորը վիթխարի, Ավագը՝ քաջ առյուծ⁵¹: Աշուղը շեշտում է Նիկոլի ոգեշնչող խոսքի դերը, որից «սիրտ առած»՝ հերոսները մարտի են գնում, նախապես Սր. Օհաննես (Հովհաննես) վանքում երգվելով ուխտագանգ չլինել.

**Նիկոլը հավաքեց քաջերը գլխին,
Խրախուսեց, քաջալերեց ամենին,
Ասավ՝ միք խնայիլ ձեր կյանքն ու հոգին,
Հայի պատվի համար դրեք միշտ գրավ⁵²:**

Մարտը, ինչպես նշեցինք վերը, ավարտվում է մի բուռ քաջերի հաղթությամբ.

**Իրավ որ, կատաղած թուրքերը եկան,
Բայց հայոց քաջերից սաստիկ ջարդ կերան,
Ոչխարի հոտի պես ցիր ու ցան եղան,
Հինգ հարյուրից հազիվ կեսը ետ դառնավ⁵³:**

Նախիջևանի հայության կոտորածի պատճառը Զիվանին համարում էր պաշտպանության միջոցներից, զենքից զուրկ լինելը: Աշուղը կոչ էր անում հայ տղամարդուն զենք կրել, զենքի ուժով լուծել ինչպես անձնական ինքնապաշտպանության, այնպես էլ ազգային խնդիրները: «Բագվից արշավեց դեպի Նախիջիվան»⁵⁴ սկզբնատողով երգում աշուղը ցավով նկատում էր. «Թուրքերը միշտ զենք կրելու սովոր են» և ապա.

**Հայ գյուղացու դրությունը հուսահատ,
Զենք ունեցող մարդ կա հազարից մեկ հաս⁵⁵:**

49 Նույն տեղում:

50 Նույն տեղում:

51 Ազգային-ազատագրական պայքարի նշանավոր գործիչ Առյուծ Ավագ:

52 ԱԶԱԵ, էջ 371:

53 Նույն տեղում:

54 Նույն տեղում, էջ 190 – 191:

55 Նույն տեղում:

Երգը մի ցավալի պատմության մասին է, թե ինչպես Թիֆլիսում ապրող մի խումբ ապրականիսցիներ որոշում են զենք հասցնել իրենց հայրենի Ապրականիս գյուղ (Նախիջևանի գավառ): Նրանք զենքը նախապես ուղարկում են, իրենք անզեն ճանապարհվում, սակայն՝ «Նրանց ծրագիրը սխալ դուրս եկավ», նկատում է աշուղը: Անզեն խումբը պաշարվում է կազակի համազգեստով թուրք զինյալների կողմից, մասամբ զոհվում, մասամբ վիրավորվում՝ մեծ վիշտ պատճառելով շրջապատին, ողջ Ապրականիս գյուղին: Երգում հիշատակվում են զոհվածների անունները:

ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ

**Ողբալի էր Միմոնյանց քաջ Նիկոլան,
Խիստ ցավալի Ստեփանը Ներսիսյան,
Ուշ կ'ծնի մեկ էլ Ավագ Զաքարյան,
Երեքն էլ անվանի ու քաջահամբավ⁵⁶:**

Ստեղծագործության առաջին երկու տողերում Ջիվանին հետևյալն է ասում.

**Բազվից արշավեց դեպի Նախչիվան,
Կտորածի հեղինակը անիրավ⁵⁷:**

Բոլոր պարագաներում նա հավատարիմ է պատմական ծջնարտությանը. հայ-թաթարական ընդհարումներն Անդրկովկասում սկսվել են Բաքվից, 1905 թ. փետրվարի սկզբին և ապա տարածվել Նախիջևանի գավառում:

Ջիվանին երգեր է հորինել նաև Ղարաբաղում տեղի ունեցած ինքնապաշտպանական կռիվների մասին: Այդ առումով հետաքրքիր նմուշ է Համազասպ Սրվանձոյանցին նվիրված ստեղծագործությունը⁵⁸, որն ընդարձակ վիպական երգ է: Աշուղն ավանդական ժանրին բնորոշ հնարքներով երգում ներկայացնում է հերոսի ծագումը, կյանքի հետագա ընթացքը, ինքնապաշտպանական կռիվներին նրա մասնակցությունն ու գործած սխրանքները: Երգից պարզվում է, որ Համազասպը «Հայաստանի Վասպուրական աշխարհից է», «Արծրունյաց ժառանգ», համբավվոր հորեղբոր՝ Գարեգին արքեպիսկոպոս Սրվանձոյանցի արժանի ժառանգորդը, նրա գործի հավատարիմ հետևորդը, և եթե առաջինը գրչով էր ծառայում ժողովրդին ու հայրենիքին, ապա Համազասպը.

**Մա էլ զենքը ձեռին՝ անվախ, քաջագով,
Խմբեր կառավարող քաջ պատերազմիկ⁵⁹:**

Ջիվանին միաժամանակ իր վերաբերմունքն է արտահայտում երջանկահիշատակ Գարեգին Սրվանձոյանցի հանդեպ իբրև «Համով-հոտովի» հեղինակի, Խրիմյան Հայրիկի հոգեզավակի, «Արծիվ Վասպուրականի»-ի աշխատակցի ու «Արծվիկ Տարոնո»-ի հրատարակչի:

Այնուհետև Ջիվանին անցնում է հերոսի արտաքին բարեմասնություն-

56 Տե՛ս նույն տեղում, էջ 191:

57 Տե՛ս նույն տեղում, էջ 190:

58 Տե՛ս նույն տեղում, էջ 372:

59 Նույն տեղում, էջ 372:

Ե (ԺԵ) քարի, թիվ 3 (43) հուլիս-սեպտեմբեր, 2013

ՎԷՄ համահայկական հանդես

ներին, ապա հետևում նրա կյանքի ընթացքին, բնավորության հիմնական առանձնահատկություններին: «Տոսպ քաղաքից դուրս եկած նոր արծվիկը» խաղաղասեր էր. «Նա չէր նեղում անզեն թուրք հարևանին <...>, կուզեր զսպել վամպիրներուն ազդեցիկ»: Նրա մասնագիտությունը կապ չուներ զենքի ու պատերազմի հետ.

**Հայ թուրքական կովի լուրը երփ առավ,
Ժամագործ էր, յուր արհեստին վերջ տվավ,
Ջինվեց մեր հերոսը, ասպարեզ մտավ,
Արծրունյաց շառավիղ որպես նոր Խաչիկ⁶⁰:**

Հերոսը, «Սյունյաց կտրիճների գլուխն անցած», «թռուցիկ խմբեր» է կազմում, որոնք Ջիվանշիրում, Խաչենում, Ջեբրայիլում ու Ասկերանի կիրճում պաշտպան էին կանգնում հայությանը: ՀՅԴ մարտական խմբերի գլուխն անցած Համազասպն աչքի ընկավ հատկապես Ասկերանի կիրճում տեղի ունեցած կռիվների ժամանակ՝ փակելով թուրք հրոսակների առաջ դեպի Շուշի և Վարանդայի խորքը տանող ճանապարհը.

**Ասկերանի քաջ հերոսը պատմական,
Որ բռնել էր հիշյալ կիրճը անառիկ⁶¹:**

Ըստ Ջիվանու երգի՝ Համազասպը սիրված և հարգված է թե՛ մեծի, թե՛ փոքրի կողմից և արագահաս Սուրբ Մարգսի նման օգնության է հասնում բոլորին, ով կարիք ունի օգնության, ինչպես օրինակ՝ Գանձակի հայությանը.

**Սուրը ձեռքին, աչգը առած արյունը,
Բնավ չէր մտածում յուր կեցությունը,
Լսեց, հասավ քաջ առյուծի կորյունը,
Երփ Գանձակում բարձրացավ նոր փոթորիկ⁶²:**

Երգում թվարկվում են նաև հերոսի գաղափարակից ընկերների անունները՝ Մեպուհ, Ֆարհատ, Ավետիս, Քաջ Սմբատ, Սուրադ, Կայծակ, Անդրանիկ: Ջիվանուն ցանկալի է, որ հայ ազգը նման հերոսներ շատ ունենա, ուստի երգն ավարտում է բարեմատությամբ.

**Ջիվանի, մեր քաջը մտավ զենքի տակ,
Շատերին կյանք տվեց, եղավ օրինակ,
Ապրի Համազասպը փառքով փառունակ,
Կյանք մաշող հոքսերը չգնան մոտիկ⁶³:**

Համազասպ Սրվանձոյանցին նվիրված երգը գրվել է 1906 թ. մարտի 16-ին, երբ հայ-թաթարական զինված ընդհարումները դեռ շարունակվում էին: Դրանք տևեցին մոտ երկու տարի՝ ընդգրկելով գրեթե ողջ Անդր-

60 Նույն տեղում, էջ 373:

61 Նույն տեղում, էջ 372:

62 Նույն տեղում, էջ 373:

63 Նույն տեղում, էջ 373:

կովկասը: Հատկանշական է, որ արևելահայերի մղած ինքնապաշտպանական կռիվների մեջ զգալի դեր էին խաղում Արմտյան Հայաստանում ծավալված հայդուկային շարժմանը մասնակից զինվորները: Այդ առումով բնորոշ է «Խնուսու ավանից նոր քաջեր եկան» սկզբնատողով երգը.

**Խնուսու ավանից նոր քաջեր եկան,
Պողպատի կտորներ երկաթի նման,
Ընտրված խումբ էին, տասնըչորս հոգի,
Հրաշքներ գործեցին, երփ Թիֆլիզ մտան⁶⁴:**

Ջիվանին ներկայացնում է Թիֆլիսի Խարփուլս թաղում հայ բնակչության պաշտպանությունը ստանձնած խմբի քաջերին՝ Թաթոս, Տիգրան, Մուշեղ, Հարբիկ, Համազասպ, Հայրո, Մելիք, Մարտիրոս, Մոսո, Մարգիս: Երգում խոր ավստասանք ու վիշտ է արտահայտվում Մուշեղի զոհվելու կապակցությամբ:

Միսիանի հայությանը օգնության եկած Կոփ գյուղացի Մխիթարյան գերդաստանի ձեռն Կնյազի մասին է «Աշխույժ. եռանդոտ դեմք գրավիչ»⁶⁵ սկզբնատողով երգը (1906 թ.): Աշուղը մեծարում է Կնյազին, նրա սկզբունքն ու գաղափարը, քաջությունն ու արտաքին բարեմասնությունները՝ շեշտելով գործի կարևորությունը.

**Միշտ պիտի [ի]իշե ողջ Միսիանը,
Քեզ ու քու խմբիդ [ի]արգելի զինվոր,
Հերոս Ֆեհրատի ժիր օգնականը,
Քաջարար կովող, կտրիձ ձիավոր⁶⁶:**

Տարիների հեռվից իր կյանքի մայրամուտին՝ 1907 թ. գրված «Կյանքի դասը» գործում հայրենասեր, ազգասեր աշուղը խրատ էր տալիս իր ժողովրդին.

**Իմացիր գուր չի շարժել դատարկ, անգործ հառաչանքը,
Լալկանի դեր խաղացող ժողովուրդը չէ երջանիկ...⁶⁷:**

Եվ ժողովուրդն ըստ արժանվույն գնահատեց իր երգչին թե՛ նրա քնարի հնչեցրած գեղեցիկ, նուրբ ու խոհուն լարերի և թե՛ ազատագրական պայքարի գաղափարն արժարժելու համար: Այս գնահատանքը Ջիվանու հուղարկավորության օրը՝ 1909թ. փետրվարի 24-ին, արտահայտվեց հետևյալ խորհրդանշական ձևով: Այդ օրերին «Դաշնակցության գործով» Մեռելիսի բանտում գտնվող Հովհաննես Թումանյանն ու Ավետիք Իսահակյանը, երբ հուղարկավորության թափոնը անցնում էր բանտի մոտով, վանդակապատ պատուհանից վերջին հրաժեշտն են տվել մեծ աշուղին՝ թաշկինակները թափահարելով⁶⁸:

Ահա այսպես Ջիվանին դեպի անմահություն էր ձանապարհվում

64 Նույն տեղում, էջ 332:

65 Նույն տեղում, էջ 158:

66 Նույն տեղում, էջ 158:

67 Նույն տեղում, էջ 600:

68 Տես Լևոնյան Գ., Հուշեր, Եր., 1959, էջ 72:

Ամենայն Հայոց բանաստեղծի և հայ գրականության Վարպետի վերջին հրաժեշտներով:

Summary

ARMENIAN LIBERATION STRUGGLE AND SELF-DEFENSIVE BATTLES IN THE SONGS OF THE ASHUG JIVANI

Tovmas G. Poghosyan

Jivani refers to the questions concerning the liberation of the Armenian people not only in allegoric form typical for the ashug poetry, for example as the famous song which begins with the words “The unlucky days...”, but he also wrote a series of works dedicated to the heroes of liberation struggle in the end of the 19th beginning of the 20th century and Armenian–Azerbaijani conflict in Transcaucasia in 1905–1906.

The above–mentioned works' structure is based on national–political generalizations expressed in poetical compositions. Conditioned by this circumstance, Jivani's works have on one hand important literary–social meaning and on the other hand, they have some value of documents and historical primary sources put in poetical form, as they have some information about events and social figures of that time.

Jivani refers to the questions concerning the liberation of the Armenian people not only in allegoric form typical for the ashug poetry, for example as the famous song which begins with the words “The unlucky days...”, but he also wrote a series of works dedicated to the heroes of liberation struggle in the end of the 19th beginning of the 20th century and Armenian–Azerbaijani conflict in Transcaucasia.

The above–mentioned works' structure is based on national–political generalizations expressed in poetical compositions. Conditioned by this circumstance, Jivani's works have on one hand important literary–social meaning and on the other hand, they have some value of documents and historical primary sources put in poetical form, as they have some information about events and social figures of that time.